«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2019 թվականի ապրիլի 30-ի տարեկան ընդհանուր ժողովը թիվ 2019-2-2 L որոշմամբ որոշել է՝

1. «Արդշինբանկ» ՓԲԸ 2018թ. արտաքին աուդիտի ենթարկված հաշվետվությունների համաձայն հաստատել Բանկի զուտ շահույթը 6 471 662 000 (վեց միլիարդ չորս հարյուր յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր վաթսուներկու հազար) ՀՀ դրամի չափով, որը բաշխել հետևյալ կերպ.

1) 323,583,100 (երեք հարյուր քսաներեք միլիոն հինգ հարյուր ութսուներեք հազար հարյուր) ՀՀ դրամի չափով (6,471,662,000 (վեց միլիարդ չորս հարյուր յոթանասունմեկ միլիոն վեց հարյուր վաթսուներկու հազար) ՀՀ դրամ զուտ շահույթի 5% (հինգ տոկոսի) չափով) կատարել պահուստային ֆոնդի (գլխավոր պահուստի) համալրում,

2) Մինչև 6,148,078,900 (վեց միլիարդ հարյուր քառասունութ միլիոն յոթանասունութ հազար ինը հարյուր)) ՀՀ դրամը բաշխել «Արդշինբանկ» ՓԲԸ սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերին որպես շահութաբաժիններ:

2.Տարեկան շահութաբաժինների փաստացի վճարումն իրականացնել Բանկի Խորհրդի համապատասխան որոշումներով՝ միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ մինչև 31.12.2019թ. (երեսունմեկը դեկտեմբերի երկու հազար տասնինը թվական) ներառյալ, պայմանով, որ դա չի հանգեցնի Բանկի կողմից օրենսդրական և/կամ պայմանագրային պարտավորությունների խախտման:

3.Տարեկան շահութաբաժինները վճարել Բանկի այն սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերին, ովքեր ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ 2019 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ՝ ըստ կանոնադրական կապիտալում նրանց մասնակցության համամասնության: Տարեկան շահութաբաժինների վճարումն իրականացնել համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրվանից: